ԺԱՄԱՆՈՒՄ ՄՈՍԿՎԱ

«Զվարթնոց» օդանավակայանից ինքնաթիռը ուղղություն է վերցնում դեպի Մոսկվա: Երկու և կես ժամ տևող թռիչքից հետո օդանավը վայրէջք է կատարում Մոսկվայի «Դոմոդեդովո» օդանավակայանում, որտեղ Նորին Սրբությանը դիմավորում և բարի գալուստ է մաղթում Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդական տեղապահ Տ. Տիրան վարդապետ Կյուրեղյանը:

Հայոց Հայրապետին դիմավորելու համար օդանավակայան էր եկել նաև ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր կրոնական պաշտամունքների խորհրդի աշխատակից տիար Էդվարդ Գալստյանը:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Մոսկվայի «Ռոսիա» հյուրանոց:

Նույն օրը, երեկոյան ժամը 21-ին, Վեհափառ Հայրապետին է այցելում Ռուս Պրավոսլավ Եկեղեցու արտաքին հարաբերությունների բաժնի վարիչ, Բելոռուսիայի միտրոպոլիտ Ֆիլարետը: Նորին Սրբազնությունը շնորհավորում է Վեհափառ Հայրապետին Փրկչի հրաշափառ Սուրբ Հարության տոնի առթիվ, բարի ճանապարհ է մաղթում նրան՝ ցանկանալով ամենայն հաջողություն և բարի վերադարձ:

Հաջորդ օրը, ապրիլի 26-ին, ժամը 10.00-ին, Վեհափառ Հայրապետին է այցելում Մոսկվայի պատրիարքարանի պաշտոնաթերթի գլխավոր խմբագիր միտրոպոլիտ Պիտիրիմը և Նորին Սրբություն Պիմեն պատրիարքի անունից Նրան հրավիրում կատակական ճաշի՝ Մոսկվայի պատրիարքարանում: Այս առթիվ Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Տ. Ներսես եպս. Պոլատյանը և Տ. Տիրան վրդ. Կյուրեղյանը:

Նույն օրը, երեկոյան ժամը 19.00-ին, Վեհափառ Հայրապետին Մոսկվայում Արգենտինայի դեսպանատանը ընդունում է ՍՍՀՄ-ում Արգենտինայի Հանրա-

պետության արտակարգ և լիապոր դեսպան Էռնեստո դե լա Գուարդիան: Ի պատիվ Վեհափառ Հայրապետի՝ մեծարգո դեսպանը այս առթիվ հրավիրել էր նաև միտրոպոլիտ Ֆիլարետին և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր կրոնական պաշտամունքների խորհրդի անդամ տիար Վիկտոր Վոլոդինին:

Ընդունելությանը ներկա էին նաև Մոսկվայում գտնվող քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ:

Մեծարգո դեսպանը սրտի անկեղծ խոսքերով բարի ճանապարհ է մաղթում Վեհափառ Հայրապետին Իր հովվապետական այցելության կապակցությամբ: Վերջում, ի պատիվ Նորին Սրբության, տրվում է ճաշկերույթ: